ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՁՐԵՎԱՋՐԱՏԱՐ ԸՆԴՈՒՆԻՉ ԴԻՏԱՀՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/95

ք. Վանաձոր

«01» նոյեմբերի 2018թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան -ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ,,Գունաշեն,, ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գարեգին Ստեփանյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սարի թաղ թաղամասը Կ.Դեմիրճյան փողոցին միացնող հատված, Աղայան փողոցից դեպի նախկին լուսատեխնիկական գործարան բարձրացող հատված, Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոցում անձրևաջրատար դիտահորերի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրի կնքման օրվանից 45 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքն չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում

լի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1072000 (մեկ միլիոն յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 185000 (մեկ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

2-րդ չափաբաժին 330000 (երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

3-րդ չափաբաժին 557000 (հինգ հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[3] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.7 Տույժերի և (կամ) սանկցիաների վճարումը կողմերին չի ազատում լրիվ պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[4]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[5]:

---

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[5] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել միայն պայմանագրում այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վանաձորի համայնքապետարան ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22 Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900232637026 ՀՎՀՀ 06901936	«Գունաշեն»ՍՊԸ ք. Վանաձոր, Նիզամի 2ա ,,Արդշինբանկ,,ՓԲԸ Հ/Հ 2479123052540010 ՀՎՀՀ 06938563
----------Մ.Ասլանյան (ստորագրություն) Կ.Տ.	----------Գ. Ստեփանյան /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 01 » նոյեմբերի 2018 թ. կնքված
N ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/95
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[6]*

Վանաձոր համայնքի Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոցի անձրևաջրատար ընդունիչ դիտահորերի կառուցում

հազ.դրամ

հ/հ	Անվանումը	Չափման միավորը	Աշխատանքի ծավալը	Միավորի գինը	Արժեքը
1.	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	3.50	3.330	11.655
2.	3-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.50	0.961	0.481
3.	Ավելորդ բնահողի փոռում տեղում	մ³	3.00	0.961	2.883
4.	Բետոնե շերտի կառուցում մետաղական կիսախողովակների տակ Վ7.5/10սմ հաստ./	մ³	1.82	31.269	56.909
5.	Մետաղական խողովակների կտրում /բաժանել 2 մասի/	մ	6.50	1.500	9.750
6.	Մետ. Կիսախողովակների տեղադրում Φ400	մ	13.00	15.677	203.801
7.	Մետաղական ճաղավանդակի կառուցում	տն	0.2560	223.840	57.303
8.	Անկյունակ L50×5	մ	26.00	2.003	52.078
9.	Ամրան Φ22 Ա-III	տն	0.158	326.659	51.612
10	Միացում գոյություն ունեցող ցանցին	հատ	2.00	13.686	27.372
	Ընդամենը՝				473.844
	Վերադիր ծախսեր՝ 13.3%				63.021
	Ընդամենը՝				536.865
	Շահույթ՝ 11%				59.055
	Ընդամենը՝				595.920
	ԱԱՀ 20%				119.184
	Ընդամենը՝				**715.104**

Սարի թաղ թաղամասը Կ. Դեմիրճյան փողոցին միացնող հատվածում անձրևաջրատար ընդունիչ դիտահորերի կառուցում

հազ.դրամ

հ/հ	Անվանումը	Չափման միավորը	Աշխատանքի ծավալը	Միավորի գինը	Արժեքը
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	2.90	1.846	5.353
2.	2-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.10	0.772	0.077

[6] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

3.	Ավելորդ բնահողի փոռում տեղում	մ³	2.73	0.772	2.107
4.	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ²	3.90	0.134	0.523
5.	Մաքրման հորի հատակի կառուցում W4 Վ-15 հիդրոբետոնով 100մմ հաստ.	մ³	0.390	59.054	23.031
6.	Մաքրման հորի պատերի կառուցում W4 Վ-15 հիդրոբետոնով 100մմ հաստ.	մ³	0.78	109.468	85.385
7.	Մետաղական ճաղաշարի կառուցում	տն	0.089	56.186	5.001
8.	Անկյունակ L45×4	մ	13.00	1.412	18.356
9.	Ամրան Φ18 A-III	տն	0.053	326.659	17.313
	Ընդամենը՝				157.147
	Վերադիր ծախսեր՝ 13.3%				20.900
	Ընդամենը՝				178.047
	Շահույթ՝ 11%				19.585
	Ընդամենը՝				197.632
	ԱԱՀ 20%				39.526
	Ընդամենը՝				**237.158**

Աղայան փողոցից դեպի նախկին լուսատեխնիկական գործարան բարձրացող հատվածում անձրևաջրատար ընդունիչ դիտահորի կառուցում

հազ.դրամ

h/h	Անվանումը	Չափման միավորը	Աշխատանքի ծավալը	Միավորի գինը	Արժեքը
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	2.90	0.961	2.787
2.	Ավելորդ բնահողի փոռում տեղում	մ³	2.90	0.961	2.787
3.	Խճի նախաշերտի կառուցում 80մմ հաստությամբ /20-40մմ/	մ³	0.80	11.722	9.378
4.	Բետոնե շերտի կառուցում մետաղական կիսախողովակների տակ Վ7.5/10 սմ հաստ/	մ³	0.48	31.269	15.009
5.	Մետաղական խողովակների կտրում /բաժանել 2 մասի/	մ	4.00	1.500	6.000
6.	Մետաղական կիսախողովակների տեղադրում Φ400	մ	8.00	15.677	125.416
7.	Մետաղական ճաղաշարի կառուցում	տն	0.124	56.186	6.967
8.	Անկյունակ L45×4	մ	16.00	1.412	22.592
9.	Ամրան Φ18A-III	տն	0.080	326.659	26.133
10.	պողպ. Թերթ b=2.5մմ	մ²	0.300	9.908	2.972
11.	Միացում գոյություն ունեցող ցանցին	հատ	1.00	13.686	13.686
12.	Թուջե մտոց գոյություն ունեցող դիտահորի համար	հատ	1.00	46.666	46.666
	Ընդամենը՝				280.393
	Վերադիր ծախսեր՝ 13.3%				37.292
	Ընդամենը՝				317.685
	Շահույթ՝ 11%				34.945
	Ընդամենը՝				352.630
	ԱԱՀ 20%				70.526
	Ընդամենը՝				**423.156**

* Կապալառուն աշխատանքները կատարում է **Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց, Սարի թաղ թաղամասը Կ. Դեմիրճյան փողոցին միացնող հատված,** ***Աղայան փողոցից դեպի նախկին լուսատեխնիկական գործարան բարձրացող հատված***:

Սարի թաղ թաղամասը Կ. Դեմիրճյան փողոցին միացնող հատված

3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով

2-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով

Ավելորդ բնահողի փոռում տեղում

Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում

Մաքրման հորի հատակի կառուցում W4 Վ-15 հիդրոբետոնով 100մմ հաստ.

Մաքրման հորի պատերի կառուցում W4 Վ-15 հիդրոբետոնով 100մմ հաստ.

Մետաղական ճաղաշարի կառուցում

Անկյունակ L45×4

Ամրան Φ18 A-III

Աղայան փողոցից դեպի նախկին լուսատեխնիկական գործարան բարձրացող հատված

3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով

Ավելորդ բնահողի փոռում տեղում

Խճի նախաշերտի կառուցում 80մմ հաստությամբ /20-40մմ/

Բետոնե շերտի կառուցում մետաղական կիսախողովակների տակ Վ7.5/10 սմ հաստ/

Մետաղական խողովակների կտրում /բաժանել 2 մասի/

Մետաղական կիսախողովակների տեղադրում Φ400

Մետաղական ճաղաշարի կառուցում

Անկյունակ L45×4

Ամրան Φ18A-III

պողպ. Թերթ b=2.5մմ

Միացում գոյություն ունեցող ցանցին

Թուջե մտոց գոյություն ունեցող դիտահորի համար

Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց

4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով

3-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով

Ավելորդ բնահողի փոռում տեղում

Բետոնե շերտի կառուցում մետաղական կիսախողովակների տակ Վ7.5/10սմ հաստ./

Մետաղական խողովակների կտրում /բաժանել 2 մասի/

Մետ. կիսախողովակների տեղադրում Φ400

Մետաղական ճաղավանդակի կառուցում

Անկյունակ L50×5

Ամրան Φ22 A-III

Միացում գոյություն ունեցող ցանցին

Աշխատանքների համար երաշխիքային ժամկետ է համարվում 1095 օրը:

Հավելված N 3
« 01 » նոյեմբերի 2018 թ. կնքված
N ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/95
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդ
1	45221142	Սարի թաղ թաղամասը Կ.Դեմիրճյան փողոցին միացնող հատված											185000	185000	185000
2	45221142	Աղայան փողոցից դեպի նախկին լուսատեխնիկական գործարան բարձրացող հատված											330000	330000	330000
3	45221142	Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց											557000	557000	557000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232637026
ՀՎՀՀ 06901936
----------Մ.Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գունաշեն»ՍՊԸ
ք. Վանաձոր, Նիզամի 2ա
,,Արդշինբանկ,,ՓԲԸ
Հ/Հ 2479123052540010
ՀՎՀՀ 06938563
----------Գ. Ստեփանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 01 » նոյեմբերի 2018 թ. կնքված
N ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/95
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 01 » նոյեմբերի 2018թ. կնքված
N ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/95
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Վանաձոր համայնքի Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոցի անձրևաջրատար ընդունիչ դիտահորերի կառուցում

հազ.դրամ

h/h	Անվանումը	Չափման միավորը	Աշխատանքի ծավալը	Միավորի գինը	Արժեքը
1.	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	3.50	3	10,5
2.	3-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.50	0,9	0,45
3.	Ավելորդ բնահողի փոռում տեղում	մ³	3.00	0,9	2,7
4.	Բետոնե շերտի կառուցում մետաղական կիսախողովակների տակ Վ7.5/10սմ հաստ./	մ³	1.82	28,2	51,324
5.	Մետաղական խողովակների կտրում /բաժանել 2 մասի/	մ	6.50	1,386	9,009
6.	Մետ. Կիսախողովակների տեղադրում Φ400	մ	13.00	15,6	202,8
7.	Մետաղական ճաղավանդակի կառուցում	տն	0.2560	190,1	48,6656
8.	Անկյունակ L50×5	մ	26.00	1,9	49,4
9.	Ամրան Φ22 Ա-III	տն	0.158	275	43,45
10	Միացում գոյություն ունեցող ցանցին	հատ	2.00	12,3	24,6
	Ընդամենը՝				442,9
	Վերադիր ծախսեր՝ 13.3%				58,9
	Ընդամենը՝				501,8
	Շահույթ՝ 11%				55,19
	Ընդամենը՝				557,0

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Սարի թաղ թաղամասը Կ. Դեմիրճյան փողոցին միացնող հատվածում անձրևաջրատար ընդունիչ դիտահորերի կառուցում

հազ.դրամ

h/h	Անվանումը	Չափման միավորը	Աշխատանքի ծավալը	Միավորի գինը	Արժեքը
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	2.90	1,8	5,22
2.	2-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով	մ³	0.10	0,7	0,07
3.	Ավելորդ բնահողի փոռում տեղում	մ³	2.73	0,7	1,91
4.	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ²	3.90	0,133	0,52
5.	Մաքրման հորի հատակի կառուցում W4 Վ-15 հիդրոբետոնով 100մմ հաստ.	մ³	0.390	59,1	23,05
6.	Մաքրման հորի պատերի կառուցում W4 Վ-15 հիդրոբետոնով 100մմ հաստ.	մ³	0.78	99,1	77,30

7.	Մետաղական ճաղաշարի կառուցում	տն	0.089	56,1	4,99
8.	Անկյունակ L45×4	մ	13.00	1,41	18,33
9.	Ամրան Φ18 A-III	տն	0.053	326,5	17,30
	Ընդամենը՝				148,69
	Վերադիր ծախսեր՝ 13.3%				19,78
	Ընդամենը՝				168,47
	Շահույթ՝ 11%				18,53
	Ընդամենը՝				187,00

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Աղայան փողոցից դեպի նախկին լուսատեխնիկական գործարան բարձրացող հատվածում անձրևաջրատար ընդունիչ դիտահորի կառուցում

հազ.դրամ

հ/հ	Անվանումը	Չափման միավորը	Աշխատանքի ծավալը	Միավորի գինը	Արժեքը
1.	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	2.90	0,8	2,3
2.	Ավելորդ բնահողի փոռում տեղում	մ³	2.90	0,8	2,3
3.	Խճի նախաշերտի կառուցում 80մմ հաստությամբ /20-40մմ/	մ³	0.80	10,5	8,4
4.	Բետոնե շերտի կառուցում մետաղական կիսախողովակների տակ Վ7.5/10 սմ հաստ/	մ³	0.48	29,5	14,2
5.	Մետաղական խողովակների կտրում /բաժանել 2 մասի/	մ	4.00	1,307	5,2
6.	Մետաղական կիսախողովակների տեղադրում Φ400	մ	8.00	15,5	124,0
7.	Մետաղական ճաղաշարի կառուցում	տն	0.124	55,5	6,9
8.	Անկյունակ L45×4	մ	16.00	1,2	19,2
9.	Ամրան Φ18A-III	տն	0.080	315,5	25,2
10.	պողպ. Թերթ b=2.5մմ	մ²	0.300	9,5	2,9
11.	Միացում գոյություն ունեցող ցանցին	հատ	1.00	11,5	11,5
12.	Թուջե մտոց գոյություն ունեցող դիտահորի համար	հատ	1.00	40,3	40,3
	Ընդամենը՝				262,4
	Վերադիր ծախսեր՝ 13.3%				34,9
	Ընդամենը՝				297,3
	Շահույթ՝ 11%				32,7
	Ընդամենը՝				330,0

„ԳՈՒՆԱՇԵՆ„ ՍՊԸ-ի տնօրեն Գարեգին Ստեփանյան ----------

Հավելված թիվ 2
« 01 » նոյեմբերի 2018 թ. կնքված
N ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/95
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«անձրևաջրատար դիտահորերի կառուցման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Սարի թաղ թաղամասը Կ.Դեմիրճյան փողոցին միացնող հատված	01.11.2018թ	15.12.2018թ
2	Աղայան փողոցից դեպի նախկին լուսատեխնիկական գործարան բարձրացող հատված	01.11.2018թ	15.12.2018թ
3	Խնձորուտ թաղամասի 5-րդ փողոց	01.11.2018թ	15.12.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ		01.11.2018թ	15.12.2018թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232637026
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գունաշեն»ՍՊԸ
ք. Վանաձոր, Նիզամի 2ա
,,Արդշինբանկ,,ՓԲԸ
Հ/Հ 2479123052540010
ՀՎՀՀ 06938563

----------Գ. Ստեփանյան
/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> այունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Աշխատանքների կատարման կերջնաժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման օրվանից հաշված 45 օր:
Աշխատանքներն իրականացնել հատուկ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները:
Աշխատանքների ավարտից հետո հարակից տարածքը մաքրել մնացորդներից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վանաձորի համայնքապետարան ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22 Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900232637026 ՀՎՀՀ 06901936	«Գունաշեն»ՍՊԸ ք. Վանաձոր, Նիզամի 2ա ,,Արդշինբանկ,,ՓԲԸ Հ/Հ 2479123052540010 ՀՎՀՀ 06938563
----------Մ.Ասլանյան (ստորագրություն)	----------Գ. Ստեփանյան /ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ